ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ ԳԱԳԻԿԻ

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՆ ՀԱՅ ԿՐՈՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՐԴԻ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐՈՒՄ

**Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ **պ.գ.թ. Հրանուշ Սերգեյի Խառատյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **պ.գ.դ. Հակոբ Մարտայի Չոլաքյան**
պ.գ.թ. Հայկ Երջանիկի Հակոբյան

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. օգոստոսի 4-ին, ժամը՝ 12:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի 007 «Հնագիտության և ազգագրության» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հուլիսի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ.գ.դ. Արսեն Էդուարդի Հարությունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ուսումնասիրության արդիականությունը: Ատենախոսությունը նվիրված է հայ կրոնական տեքստերում Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարի աստվածաբանական և պատմական քննությանը, ժամանակակից Հայաստանի հոգևոր-ծիսական իրողությունների համատեքստում վերջինիս պաշտամունքի ժողովրդական ընկալումների ու արդի դրսևորումների վերլուծությանը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է հայագիտության մեջ վարքաբանական և ազգագրական շերտերի համապարփակ ու միջգիտակարգային հետազոտության անհրաժեշտությամբ, քանի որ սրբի կերպարը հայկական հոգևոր մշակույթի առանցքային և բազմաշերտ երևույթներից է: Հետազոտության հիմքում կանոնական մատենագրական ավանդույթի և ժողովրդական հավատալիքների միջև առկա փոխառնչությունների վերհանումն է, ինչը թույլ է տալիս բացահայտել քրիստոնեական վարքագրական տեքստերի փոխակերպումը հանրային գիտակցության մեջ՝ դրանց գործառնական և ծիսական վերաիմաստավորման համատեքստում: Միջնադարյան քարոզգրական, կանոնական ու պատմագրական սկզբնաղբյուրների քննությամբ՝ աշխատանքում համակարգվում և ամբողջացվում են սրբին նվիրված պաշտամունքային վայրերն ու դրանց հետ կապված ծիսական արարողակարգերը: Արդի ժամանակաշրջանում թեման առանձնահատուկ կարևորություն է ստանում կրոնական գործառույթների արագընթաց փոփոխությունների համատեքստում, ինչն առաջնահերթ է դարձնում ուխտագնացության ու տոնածիսական մշակույթի ավանդական դրսևորումների և դրանց արդի ձևափոխումների փաստագրումն ու վերլուծությունը: Բացի այդ, սրբի կերպարի քննությունը պատմաշխարհագրական համատեքստում նպաստում է վտանգված կամ կորսված մշակութային ժառանգության վերարժևորմանը՝ հիմնավորելով հայ հոգևոր-մշակութային, այդ թվում՝ ոչ նյութական մշակութային արժեքների շարունակականությանը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է համակողմանիորեն վերլուծել Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարի ձևավորման և ժառանգման ընթացքը հայ կրոնական տեքստերում, ժողովրդական պատկերացումներում, արդի, ժողովրդական տոնածիսական պրակտիկաներում՝ բացահայտելով դրանց փոխկապակցվածությունը, պատմական զարգացումը ու փուլային դրսևորումները:

Աշխատանքի նպատակն է բացահայտել տարբեր միջավայրերում սրբի կերպարի իմաստային շերտավորումները, որոնք ձևավորում են միասնական, բայց միաժամանակ բազմաշերտ կրոնամշակութային համակարգ:

Առաջադրված նպատակի իրագործման համար դիտարկվում են հետևյալ խնդիրները.

ա. վերլուծել Ս. Ստեփանոս Նախավկայի մասին հիշատակությունները հայ եկեղեցական մատենագրության մեջ (աստվածաշնչյան մեկնություններ, հայրաբանական երկեր, վարքագրություններ, շարականներ, տոնացույցային նյութեր),

բ. բացահայտել սրբի կերպարի աստվածաբանական և գաղափարական հիմնական շեշտադրումները հայ եկեղեցական մտածողության համակարգում,

գ. ուսումնասիրել Ս. Ստեփանոսի պաշտամունքի հետ կապված ժողովրդական պատկերացումները, հավատալիքները և բանավոր ավանդությունները,

դ. քննության առնել սրբի պաշտամունքին առնչվող տոնական, ուխտագնացության և ծիսական պրակտիկաները ժողովրդական միջավայրում,

ե. վերլուծել Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարի արդի դրսևորումները ժամանակակից հայ կրոնական կյանքում,

զ. համադրել տեքստային, ազգագրական և արդի տվյալները՝ վերհանելու դրանց միջև առկա շարունակականությունն ու փոփոխությունները:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն: Ս. Ստեփանոսի կերպարի և նրա անվամբ եկեղեցիների կառուցման մասին վկայություններ են հանդիպում հայկական միջնադարյան պատմագրական բազմաթիվ սկզբնաղբյուրներում: Հայ պատմիչները՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Մովսես Կաղանկատվացին, «Անանուն զրուցագիրը» (կարծեցյալ Շապուհ Բագրատունի), Ստեփանոս Օրբելյանը, Առաքել Դավրիժեցին և Թովմա Մեծոփեցին, տեղեկություններ են հաղորդում սրբի պաշտամունքի տարածվածության, նրա պատվին կառուցված սրբավայրերի նշանակության մասին՝ հասարակական, կրոնական և քաղաքական համատեքստում: Այս պատմագրական վկայությունները ոչ միայն փաստագրական բնույթ ունեն, այլև արտացոլում են Ս. Ստեփանոսի կերպարի հայկական ընկալումները և այն գաղափարախոսական ու մշակութային պրակտիկաները, որոնք միավորում էին քրիստոնեական համայնքները և ամրապնդում սրբի պաշտամունքը հայկական միջավայրում:

19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի սկզբի հայագիտական ու ազգագրական գրականության մեջ Ս. Ստեփանոս Նախավկայի վերաբերյալ հիշատակությունները բազմաթիվ են և առանձնանում են իրենց տարատեսակությամբ և ներկայացման ձևերով: Այս շրջանը բնութագրվում է ժողովրդական հավատալիքների, տոնացույցային ավանդությունների և տեղական սրբավայրերի նկատմամբ աճող հետաքրքրությամբ: Արժեքավոր սկզբնաղբյուրներ են Ղ. Ալիշանի, Հովի. եպս. Շահխաթունեացի, Քաջբերունու, Մ. արք. Սմբատյանցի, Գ. Շերենցի, Մ. Միրախորյանի, Մ. Բարխուդարյանցի, Հ. Ոսկեանի, Ե. Լալայանի և այլոց աշխատությունները: Դրանցում Ս. Ստեփանոսին հիշատակությունները ներառված են պատմազգագրական նյութերում՝ սրբի կերպարն ու պաշտամունքը դիտարկելով կոնկրետ տարածքների, եկեղեցիների կամ համայնքային սովորույթների առնչությամբ: Այս հեղինակների երկերում սրբի կերպարը ներկայացվում է տեղական հիշողության մեջ ու ավանդություններում, ինչի արդյունքում վեր է հանվում եկեղեցական և ժողովրդական շերտերի փոխազդեցությունը:

Ս. Բարխուդարյանի «Դիվան հայ վիմագրության» բազմահատորյակում տեղեկություններ կան Ս. Ստեփանոսի անունը կրող վանքերի, եկեղեցիների, մատուռների արձանագրությունների մասին, որոնք առավելապես շինարարական և նվիրատվական բնույթի են: Ա. Այվազյանի «Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները» աշխատության տվյալներով՝ Ս. Ստեփանոսի անվամբ սրբավայրերը տարածված են եղել Նախիջևանի տարբեր գավառներում, ինչը ցույց է տալիս

Նախավկայի պաշտամունքի լայն աշխարհագրական ընդգրկումը տվյալ շրջանում: Ա. Այվազյանի նկարագրություններում սրբավայրերը հիմնականում ներկայացվում են ավերված կամ կիսավեր վիճակում, ինչը խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններում հայկական մշակութային ժառանգության կորստի վավերագրումն է:

Հ. Չոլաքյանի «Քեսապ» աշխատության մեջ Ս. Ստեփանոսի անունն առնչվում է տեղի եկեղեցիներին կամ մատուռներին, որոնք հանդես են գալիս որպես համայնքային ինքնության, ուխտագնացության և հավաքական հիշողության կենտրոններ: Հեղինակի անդրադարձերում սրբավայրի տեղադրությունը, կապված է բնակավայրի պատմության հետ և տեղի բնակիչների հավատալիքների հետ, ինչն առանցքային նշանակություն ունի սրբի պաշտամունքի ուսումնասիրությունն այլ՝ համայնքային պատմա-մշակութային ինքնության դիտանկյունից հասկանալու համատեքստում:

Խորհրդային տարիներին Ս. Ստեփանոս սրբավայրերի մասին տեղեկություններ կան Ս. Խանզադյանի քառահատոր աշխատությունում, որտեղ հեղինակը ներկայացնում է 1929-1985 թթ. հեղինակի տեսած սրբավայրերն ու արձանագրած նյութերը: Նրա աշխատություններում Ս. Ստեփանոս անվամբ սրբավայրերը հիշատակվում են ոչ թե որպես եկեղեցական-ծիսական կենտրոններ, այլ մշակութային հիշողություն և ազգային ինքնություն կրող տարածքներ: Նրա նկարագրություններում սրբավայրերն առնչվում են գյուղական միջավայրին, լեռներին, աղբյուրներին կամ հնագույն ավերակ եկեղեցիներին՝ հանդես գալով որպես «լքված», բայց անցյալից պահպանված սրբավայրեր: Ս. Ստեփանոսի և նրա անվամբ սրբավայրերի մասին տեղեկություններ կան նաև հանրագիտարաններում, մասնավորապես՝ Ս. Էփրիկյանի «Պատկերազարդ բնաշխարհիկ հանրագիտարան», Ստ. Մելիք-Բախշյանի «Հայոց պաշտամունքային վայրեր» աշխատություններում:

Ս. Կարապետյանի ուսումնասիրություններում Ս. Ստեփանոս անվամբ սրբավայրերին անդրադադարձ է կատարվում հիմնականում հուշարձանագիտական և տեղագրական դիտանկյունից: Նրա աշխատություններում Ս. Ստեփանոսի անունը հանդիպում է Խորհրդային Հայաստանից դուրս մնացած տարածքների վանքերի, եկեղեցիների, մատուռների նկարագրություններում, մասնավորապես՝ Ջավախքում (Վրաստան), Ախլցխայում (Վրաստան), Հյուսիսային Արցախում (Ադրբեջան): Ս. Կարապետյանը մանրամասնորեն փաստագրում է Ս. Ստեփանոսի անվամբ սրբավայրերի տեղագրությունը և աշխարհագրական միջավայրը, ճարտարապետական առանձնահատկությունները, պահպանված կամ կորսված արձանագրությունները: Հեղինակն արձանագրում է, որ ի թիվս այլ հուշարձանների, Ս. Ստեփանոս անվամբ եկեղեցիներն ու մատուռները 20-րդ դարի ընթացքում վերակառուցվել են, ենթարկվել համակարգված ավերման կամ հիմնահատակ ոչնչացման: Այս դիտարկումները Ս. Ստեփանոսի պաշտամունքը ներկայացնում են ոչ միայն կրոնական, այլև քաղաքակրթական ժառանգության կամ վերջինիս ոչնչացման շրջանակում:

Ս. Ստեփանոս անունը կրող սրբավայրերի մասին որոշ տվյալներ հայտնաբերվել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում:

Ատենախոսության հենքը կազմում են 2016-2025 թթ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտարշավային խմբի կողմից նախապես մըշակված և պարբերաբար թարմացվող հարցաշարով ՀՀ տարածքում հետևողականորեն ժողովրդական սրբավայրերի ուսումնասիրությունը, այդ թվում՝ Ս. Ստեփանոս Նախավկայի անունը կրող սրբավայրերը: Ս. Ստեփանոս Նախավկային վերաբերող դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ) են հավաքվել Երևան քաղաքում, Արագածոտնի, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց ձորի, Լոռու, Սյունիքի մարզերում:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Հետազոտությունը հիմնվում է միջգիտակարգային մեթոդաբանական մոտեցման վրա, որն իրականացվել է պատմահամեմատական, տեքստաբանական, կրոնագիտական և ազգագրական վերլուծության մեթոդների համադրմամբ: Եկեղեցական տեքստերի վերլուծության ընթացքում կիրառվում են աղբյուրագիտական բնագրագիտական մեկնաբանական վերլուծության մեթոդներ, իսկ ժողովրդական պատկերացումների ուսումնասիրության համար օգտագործվում է դաշտային ազգագրության գործիքակազմը, մասնավորապես՝ հարցազրույցները, դիտարկումներն ու բանավոր վկայությունների փաստագրումը:

Նյութերի աղբյուրագիտական հենքն ընդգրկում է հայ միջնադարյան մատենագրությունը, եկեղեցական օրացույցներն ու ծիսամատյանները, 19-րդ դարի հեղինակների վավերացրած տեղագրական և ազգագրական նյութերը, ինչպես նաև ատենախոսի կողմից գրանցված ժամանակակից ազգագրական դաշտային նյութերը: Այս բազմաշերտ սկզբնաղբյուրների համադրումը հնարավորություն է տալիս ժամանակագրական հաջորդականությամբ ցույց տալ Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարի նշանակությունն ու գործառույթները հայ կրոնական և ժողովրդական մշակույթում:

Հետազոտությունը հենվում է արդի կրոնագիտության մարդաբանական այն հայեցակարգերի վրա, որոնց համաձայն կրոնական երևույթները պետք է ուսումնասիրվեն ոչ միայն պաշտոնական դավանաբանական համակարգերի և եկեղեցական տեքստերի, այլև ժողովրդական պատկերացումների, հավատացյալների առօրյա փորձառությունների և ծիսական պրակտիկաների շրջանակում:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն է Ս. Ստեփանոսի պաշտամունքի ուսումնասիրությունը որպես դինամիկ մշակութային երևույթ, որի ձևավորման և զարգացման գործընթացում փոխազդում են պաշտոնական եկեղեցական ավանդույթը, պատմաքաղաքական իրողություններն ու ժողովրդական կրոնականության փոխակերպումները: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտել սրբի կերպարի ներկայացման, ընկալման, վերաիմաստավորման և տեղայնացման առանձնահատկությունները պատմամշակութային տարբեր ժամանակաշրջաններում և տարածքներում, ինչպես նաև դրանց սերնդեսերունդ փոխանցման ընթացքը:

Հետազոտության կարևոր արդյունքներից է Ս. Ստեփանոսին նվիրված հայկական սրբավայրերի և ճարտարապետական հուշարձանների աշխարհագրության առաջին համակողմանի վերակազմումն ու քարտեզագրումը՝ հիմնված

պատմական հիշատակությունների, մատենագրական սկզբնաղբյուրների և դաշտային նյութերի համադրության վրա: Միաժամանակ առաջին անգամ ստեղծվել և համակարգվել է Ս. Ստեփանոսի պաշտամունքի արդի դրսևորումներին, ուխտագնացության ավանդույթներին և ժողովրդական կրոնական պրակտիկաներին վերաբերող ազգագրական տվյալների շտեմարան, ինչը կարող է հիմք հանդիսանալ հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է պաշտպանության ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի նիստում: Ատենախոսության որոշ հիմնադրույթների վերաբերյալ հոդվածներ են տպագրվել հանրապետական և միջազգային գիտական ամսագրերում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից, որը ներառում է տեքստային աղյուսակներ, լուսանկարներ, քարտեզներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունում ներկայացված են քննվող հետազոտության առարկայի էությունը, ատենախոսության նպատակները և խնդիրները, թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, ինչպես նաև աշխատանքի տեսական-մեթոդաբանական հիմքերը, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ
ԵՐՈՒՍԱՂԵՄԸ ԵՎ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ. Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՈՒ ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է Երուսաղեմի վաղքրիստոնեական սրբազան լանդշաֆտի համատեքստում Ս. Ստեփանոս Նախավկայի պաշտամունքի ձևավորման պատմական ու աստվածաբանական նախադրյալների քննությանը և դրա համաքրիստոնեական տարածման ընթացքին: Ս. Ստեփանոս Նախավկան քրիստոնեական եկեղեցու առաջին մարտիրոսն է, որի կերպարը ձևավորվել է վաղքրիստոնեական համայնքի ինքնագիտակցության, վկայաբանական և սրբապաշտական համակարգի առանցքում: Նրա կյանքի, քարոզչության և նահատակության վերաբերյալ հիմնական սկզբնաղբյուրը «Գործք Առաքելոց»-ն է (Գործք 6-7): Այստեղ Ս. Ստեփանոսը ներկայացվում է որպես հավատով և Սուրբ Հոգով լի անձ, ընտրված յոթ սարկավագներից մեկը, որը համայնքային ծառայությունից զատ՝ դրսևորում էր աստվածաբանական բացառիկ իմաստություն և քարոզչական զորություն: Հրեական ատյանի առջև նրա դավանանքն ու քարկոծմամբ ուղեկցվող նահատակությունը քրիստոնեական ավանդության մեջ ընկալվեցին որպես Քրիստոսի չարչարանքների առաջին լիարժեք համահետևում (Imitatio Christi), ինչով իսկ Ստեփանոսը դարձավ մարտիրոսության նախատիպը:

Համաքրիստոնեական ավանդույթում Ս. Ստեփանոսի կերպարը ձեռք բերեց բացառիկ նշանակություն՝ որպես հավատի, եկեղեցուն նվիրվածության և աստվածային ճշմարտության համար անձնազոհության խորհրդանիշ:

Ս. Ստեփանոսի պաշտամունքը տարածում գտավ ամբողջ քրիստոնեական աշխարհում: 4-րդ դարից սկսած՝ նրա հիշատակը հաստատվեց եկեղեցական օրացույցներում, ձևավորվեցին տոնական արարողություններ, գրվեցին վարքագրական բնագրեր, ճառեր և շարականներ: Հայ եկեղեցական, ինչպես և բյուզանդական, ասորական, ղպտիական, լատինական եկեղեցական ավանդությունները, յուրովի զարգացրեցին Ս. Ստեփանոսի կերպարը՝ պահպանելով դրա համաքրիստոնեական էությունը: Նրա անվամբ կառուցվեցին բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ ու մատուռներ՝ Երուսաղեմից մինչև Կոստանդնուպոլիս, Հռոմից մինչև Հայաստան:

Ստեփանոսի կերպարի համաքրիստոնեական նշանակությունը պայմանավորված էր նաև նրա ընկալմամբ որպես՝ եկեղեցու ծառայության, քարոզչության և նահատակության միասնության մարմնավորում: Նա միաժամանակ սարկավագ էր, քարոզիչ և վկա, ինչը նրան դարձրեց հոգևոր ծառայության իդեալական օրինակ՝ եկեղեցու հետագա հոգևոր դասի ներկայացուցիչների համար: Եկեղեցու հայրերը՝ Գրիգոր Նյուսացին, Հովհան Ոսկեբերանը, Օգոստինոս Երանելին, Եփրեմ Ասորին և ուրիշներ, իրենց ճառերում ընդգծում էին Ստեփանոսի ներողամտությունը, քանի որ նա, Քրիստոսի նման, աղոթեց իրեն քարկոծողների համար: Այս հանգամանքը նրա կերպարին հաղորդեց ոչ միայն նահատակության, այլև քրիստոնեական սիրո և ողորմածության կատարյալ օրինակ լինելու նշանակություն:

Հայ եկեղեցական ավանդույթում Ս. Ստեփանոսը ներառվեց համաքրիստոնեական սրբերի այն դասում, որոնք առանձնակի տեղ զբաղեցրին ազգային հոգեվոր մշակույթում: Նրա հիշատակությունը տեղ գտավ տոնացույցում, շարականներում, մեկնողական գրականության մեջ, ինչպես նաև ժողովրդական կրոնական պատկերացումներում: Հայ իրականության մեջ նրա կերպարը համադրվեց տեղական սրբավայրերի, ուխտերի և բարեպաշտական պրակտիկաների հետ՝ պահպանելով իր համընդհանուր քրիստոնեական բովանդակությունը, հերթական անգամ ցույց տալով Հայ առաքելական եկեղեցու՝ տիեզերական եկեղեցուն մաս կազմելու հանգամանքը:

Ս. Ստեփանոսի տոնի ձևավորումը քրիստոնեական տոնացույցի կարևորագույն գործընթացներից էր, որն արտացոլում է վաղ եկեղեցու նվիրական համակարգի աստիճանական ինստիտուցիոնալացումը: Նրա հիշատակի տոնակատարությունը սկզբնապես կապված էր նահատակների հիշատակության տեղային ծիսակարգերին, սակայն 4-5-րդ դարերում՝ քրիստոնեության պետականացման և եկեղեցական կառույցների ամրապնդման պայմաններում, Ս. Ստեփանոսի տոնը ձեռք բերեց համաեկեղեցական բնույթ:

Արևմտյան եկեղեցում Ս. Ստեփանոսի տոնը սահմանվեց դեկտեմբերի 26-ին՝ Սուրբ Ծննդյան հաջորդ օրը: Արևելյան եկեղեցիներում տոնական օրերը տարբեր էին, սակայն բոլոր ավանդություններում պահպանվում էր Ս. Ստեփանոսի հիշատակի բարձր կարգավիճակը:

Հայ Առաքելական եկեղեցու տոնացույցում Ս. Ստեփանոսի հիշատակը ներառվեց Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության տոներին նախորդող շրջանում՝ դեկտեմբերի 25-ին կամ հաջորդող օրերի: Հայ եկեղեցու առանձնահատկությունն այն է, որ տոնացույցը պահպանել է ազգային-եկեղեցական յուրահատկությունները՝ միավորելով համաքրիստոնեական սրբապաշտությունը տեղական ծիսական ավանդույթների հետ:

Ս. Ստեփանոսի տոնի ձևավորումն ու կանոնակարգումը կարևոր դեր ունեցան նրա պաշտամունքի պահպանման և տարածման գործում՝ ապահովելով սրբի հիշատակի շարունակական ներկայությունը քրիստոնեական հանրույթի հոգևոր կյանքում: Հայ եկեղեցու պարագայում այս գործընթացը նաև նպաստեց ազգային ծիսական ինքնության ամրապնդմանը՝ համադրելով համաքրիստոնեական սրբի պաշտամունքը հայ մշակութային միջավայրի առանձնահատկություններին:

Ս. Ստեփանոսի պաշտամունքի զարգացման պատմության մեջ առանցքային նշանակություն ունեցավ նրա մասունքների հայտնությունը, որը տեղի ունեցավ 5-րդ դարի սկզբին և զգալիորեն խթանեց սրբի համաքրիստոնեական պաշտամունքի ընդլայնումը: Ըստ եկեղեցական ավանդության՝ 415 թ. Երուսաղեմի մերձակայքում քահանա Լուկիանոսի տեսիլքի շնորհիվ հայտնաբերվեցին Ս. Ստեփանոսի մասունքները: Այս իրադարձությունը մեծ արձագանք գտավ քրիստոնեական աշխարհում և ընկալվեց որպես աստվածային նախախնամության դրսևորում:

Մասունքների հայտնաբերումից հետո Ս. Ստեփանոսի անունը նոր թափով տարածվեց ամբողջ քրիստոնեական աշխարհում: Դրանք տեղափոխվեցին և բաժանվեցին տարբեր եկեղեցիների միջև, ինչի արդյունքում ձևավորվեցին նոր ուխտավայրեր, սրբատեղիներ: Երուսաղեմում, Կոստանդնուպոլսում, Հռոմում, Անտիոքում և այլ կենտրոններում կառուցվեցին նրա անունը կրող սրբավայրեր, որոնք դարձան ուխտագնացության կարևոր կենտրոններ:

Մասունքների պաշտամունքը միջնադարյան քրիստոնեական աշխարհում կարևորագույն երևույթ էր, և Ս. Ստեփանոսի մասունքները ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական ու մշակութային նշանակություն ունեին: Դրանք հաճախ ծառայում էին որպես եկեղեցական հեղինակության, կայսերական բարեպաշտության և տարածաշրջանային հոգևոր կենտրոնների ամրապնդման միջոց:

Ս. Ստեփանոսի մասունքների գյուտը շրջադարձային նշանակություն ունեցավ նրա պաշտամունքի տարածման համար, իսկ հայկական միջավայրում այն նպաստեց սրբի կերպարի ընկալմանը եկեղեցական և ժողովրդական ավանդույթների մեջ: Հայկական իրականության մեջ Ս. Ստեփանոս Նախավկայի մասունքները ոչ միայն պաշտամունքային առարկաներ էին, այլև ռազմավարական նշանակություն ունեցող սրբազան հեղինակության գրավական: Դրանց առկայությունը հիմնարար գործոն էր՝ ինչպես համաքրիստոնեական եկեղեցիների հետ մըրցակցային հարաբերություններում ազգային ինքնությունը պաշտպանելու, այնպես էլ ներհայկական թեմական համակարգում և կոնկրետ վանական համալիրնում սեփական հեղինակությունն ամրապնդելու համար:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Այս գլխում անդրադարձ է կատարվում Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարին հայ պատմագրական ավանդությունում, որը ձևավորվել է համաքրիստոնեական վարքաբանական ժառանգության և հայ եկեղեցու ինքնուրույն դավանամշակութային զարգացման համատեքստում՝ ստանալով ոչ միայն համընդհանուր քրիստոնեական, այլև ազգային-եկեղեցական առանձնահատուկ նշանակություն: Հայ պատմագիրների, վարքագիրների, ճառագիրների և մեկնիչների երկերում Ս. Ստեփանոսը հանդես է գալիս որպես նախավկայական սրբության կատարյալ օրինակ, որի կերպարի միջոցով մեկնաբանվում են քրիստոնեական վկայաբանության, մարտիրոսության և եկեղեցու հոգևոր առաքելության հիմնարար գաղափարները:

Վաղ միջնադարյան հայ պատմագրության մեջ Ս. Ստեփանոսի կերպարի անդրադարձները հիմնականում կրում են դավանաբանական և բարոյախրատական բնույթ: Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ, որտեղ ձևավորվում է հայոց դարձի և քրիստոնեական պետականության գաղափարական հենքը, համաքրիստոնեական սրբերի համակարգը կարևոր նախատիպային դեր ունի, իսկ Ստեփանոսի կերպարն ընկալվում է որպես առաջին վկայության մարմնավորում: Փավստոս Բուզանդի և Եղիշեի աշխատություններում նահատակության գաղափարի մեկնաբանությունը հաճախ կառուցվում է նախավկայական մոդելի շուրջ, որտեղ Ս. Ստեփանոսը հանդես է գալիս որպես հավատքի համար անձնազոհության համընդհանուր բարձրագույն չափանիշ: Հատկապես Եղիշեի երկում Վարդանանց նահատակության գաղափարաբանությունն իր ներքին կառուցվածքով հարաբերվում է նախավկայական ավանդույթին՝ հայ ազգային դիմադրությունը ներառելով համաքրիստոնեական մարտիրոսաբանության համատեքստում:

Հայ պատմագրության մեջ Ս. Ստեփանոսի կերպարի կարևոր առանձնահատկություններից է նրա ներառումը ազգային հիշողության համակարգում: Նրա հիշատակը ոչ միայն վերարտադրվում է համաքրիստոնեական սրբության շրջանակում, այլև տեղայնացվում է հայկական եկեղեցաշինության, սրբավայրային մըշակույթի և տոնական համակարգի միջոցով: Պատմիչների կողմից Ս. Ստեփանոսի անվամբ վանքերի, եկեղեցիների, նվիրատվությունների և ուխտավայրերի հիշատակությունները փաստում են, որ նրա պաշտամունքը հայ իրականության մեջ դարձել էր ազգային հոգևոր կյանքի կարևոր բաղկացուցիչ:

Վաղ շրջանում և նոր ժամանակներում Ս. Ստեփանոսի կերպարը շարունակում է պահպանվել թե՛ եկեղեցական մատենագրության, թե՛ ժողովրդական պատմական հիշողության ու պրակտիկայի մեջ՝ արտահայտվելով տոնական ավանդույթներում, սրբավայրերի պահպանման մեջ և բանավոր մշակույթում: Այսպիսով, հայ պատմագրության մեջ Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարը վերածվում է համաքրիստոնեական սրբության ազգային յուրացման բացառիկ օրինակ, որ-

տեղ համադրվում են դավանաբանական, պատմական, մշակութային և ինքնության շերտերը:

Ս. Ստեփանոս Նախավկայի մասունքների պաշտամունքը, հայկական միջավայրում ձևավորվել է համաքրիստոնեական մասունքների պաշտամունքի ավանդույթի շրջանակներում, սակայն ժամանակի ընթացքում ստացել է տեղայնացված դրսևորումներ՝ պայմանավորված հայ եկեղեցու ծիսակարգային առանձնահատկություններով, սրբավայրային մշակույթով և ժողովրդական բարեպաշտության ձևերով: Քրիստոնեության պետականացումից հետո հայոց եկեղեցին որդեգրեց սրբերի մասունքների հանդեպ պաշտամունքը՝ այն ներառելով ազգային հոգևոր կյանքի կարևորագույն բաղադրիչների շարքում:

Ս. Ստեփանոսի մասունքների մեծարումն առավել շեշտվեց դրանց հայտնությունից հետո, երբ համաքրիստոնեական աշխարհում Նախավկայի պաշտամունքը նոր վերելք ստացավ: Հայ եկեղեցական ավանդույթում մասունքները ոչ միայն սրբության նյութական ներկայության խորհրդանիշ էին, այլև՝ աստվածային շնորհի, բժշկության և եկեղեցական հեղինակության աղբյուր: Այս հանգամանքը նպաստեց Ս. Ստեփանոսի անվամբ եկեղեցիների, վանքերի և ուխտավայրերի ձևավորմանը, որոնցից շատերը հավակնում էին ունենալ մասունք կամ մասունքների հետ կապված սրբազան ավանդություն:

Միջնադարյան հայկական աղբյուրներում պահպանվել են հիշատակություններ մասունքների տեղափոխության, նվիրատվությունների, սրբազան առարկաների և մասնատուփերի վերաբերյալ, որոնք փաստում են պաշտամունքի ինստիտուցիոնալ զարգացումը: Սրբի մասունքների պաշտամունքը կապված էր ինչպես եկեղեցաշինության, այնպես էլ քաղաքական և կրոնական հեղինակության հետ, քանի որ մասունքների առկայությունը հաճախ բարձրացնում էր տվյալ եկեղեցու կամ վանքի հոգևոր կարգավիճակը:

Ժողովրդական կրոնական պատկերացումներում Ս. Ստեփանոսի մասունքները և դրանց հետ առնչվող սրբավայրերը ձեռք են բերել նաև հրաշագործ, բուժիչ և պաշտպանական նշանակություն: Դրանք ընկալվել են որպես հիվանդություններից բժշկության, չարիքից պաշտպանության, ուխտագնացության իրագործման և ընտանեկան բարօրության սրբազան միջոց: Այսպիսով, մասունքների պաշտամունքը հայկական միջավայրում վերածվել է ոչ միայն պաշտոնական եկեղեցական պաշտամունքի, այլև ժողովրդական հավատալիքների կենսունակ համակարգի:

Ս. Ստեփանոսի անվամբ սրբավայրերի աշխարհագրական բաշխվածության ուսումնասիրությունը պահանջում է համալիր աղբյուրագիտական և պատմաճարտարապետական մոտեցում՝ համադրելով գրավոր հիշատակությունները, վիմագրական տվյալները, ձեռագրական ավանդությունները և տեղագրական նյութը: Այս տեսանկյունից Ս. Ստեփանոսի սրբավայրերի համակարգը կարելի է դիտարկել որպես հայկական սրբազան տարածության ձևավորման կարևոր բաղադրիչ, ինչն արտացոլում է եկեղեցական կառուցվածքի և ժողովրդական բարեպաշտության տարածքային դրսևորումները:

Պատմական հիշատակությունները վկայում են, որ Ս. Ստեփանոսի անվամբ սրբավայրերը տարածված են եղել Մեծ Հայքի գրեթե բոլոր նահանգներում՝

առանձնանալով տարբեր խտություններով և գործառութային բնույթով: Դրանց տեղաբաշխումը չի եղել պատահական, այլ հաճախ պայմանավորվել է բնակավայրային համակարգով, միջնադարյան ճանապարհային հաղորդակցություններով, եկեղեցական թեմերի կառուցվածքով և տեղական իշխանական հովանավորությամբ: Այս հանգամանքը թույլ է տալիս սրբավայրերը դիտարկել ոչ միայն որպես պաշտամունքային կենտրոններ, այլև որպես պատմական տարածքի սոցիոմշակութային կազմակերպման տարրեր:

Տարածքային ընդգրկմամբ առանձնանում են մի քանի հիմնական գոտիներ, որտեղ Ս. Ստեփանոսի սրբավայրերի առկայությունը առավել ընդգծված է. դրանք են՝ հարավարևելյան շրջանները (Սյունիք, Արցախ), կենտրոնական հատվածը (Վասպուրական): Այս գոտիներում սրբավայրերը հաճախ ունեցել են բազմաշերտ գործառույթ՝ միաժամանակ ծառայելով որպես ծխական եկեղեցի, վանական համալիր կամ ուխտավայր:

Ս. Ստեփանոս Նախավկայի սրբավայրերի աշխարհագրության ուսումնասիրության կարևոր առանձնահատկություններից է դրանց կապը վիմագրական հիշատակությունների հետ: Վիմագիր շինարարական արձանագրությունները և նվիրատվական գրությունները հաճախ վկայում են եկեղեցաշինական գործունեության, տեղական համայնքների մասնակցության և սրբի անվան շուրջ ձևավորված պաշտամունքային ավանդույթի մասին: Այս տվյալները թույլ են տալիս վերակազմել ոչ միայն սրբավայրերի տարածական բաշխվածությունը, այլև դրանց սոցիալական և կառուցվածքային հիմքերը:

Հայկական գաղթօջախներում Ս. Ստեփանոսի անվամբ սրբավայրերի հիմնադրումը վկայում է պաշտամունքի տարածման երկրորդային փուլի մասին, ինչը պայմանավորված է եղել տեղաշարժերով, համայնքային վերաբնակեցումներով և նոր եկեղեցական կենտրոնների ձևավորմամբ: Այս միջավայրերում սրբավայրերը հաճախ ունեցել են նաև ինքնության պահպանման և համայնքային համախմբման գործառույթ:

Ս. Ստեփանոսի սրբավայրերի համակարգը հայկական կրոնամշակութային իրականության մեջ հանդես է գալիս որպես բազմագործառութային սրբազան տարածական կառուցվածք, որտեղ միահյուսվում են եկեղեցական ծիսականությունը, ժողովրդական բարեպաշտությունը և համայնքային սոցիալական փորձառությունը: Այս սրբավայրերը ոչ միայն պաշտամունքային կենտրոններ են, այլև հիշողության, ինքնության և տեղային սրբազան աշխարհընկալման ձևավորման և դրսևորման կարևոր հանգույցներ:

Ուխտավայրերի գործառույթային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ունեցել են բազմաշերտ նշանակություն՝ սկսած կանոնակարգված եկեղեցական ծիսակատարություններից մինչև ժողովրդական հավատալիքների և անհատական բարեպաշտության դրսևորումներ: Ս. Ստեփանոսի սրբավայրերը հաճախ ընկալվել են որպես միջնորդական տարածքներ, որտեղ հավատացյալը հաղորդակցվում է աստվածայինի հետ՝ սրբի բարեխոսության միջոցով: Այս միջնորդական ընկալումը հատկապես արտահայտվել է բժշկման, պաշտպանական օգնության և երդմնառության ծիսակարգերի համատեքստում:

Ժողովրդական ուխտագնացությունները դեպի Ս. Ստեփանոսի սրբավայրեր ձևավորել են շարժունակ կրոնական մշակույթային միջավայր, որը բնորոշվում է տարածական շարժունակությամբ, ծիսակարգային բազմազանությամբ և համայնքային ներգրավվածությամբ: Ուխտագնացության պրակտիկաները ներառել են մատաղ, մոմավառություն, գիշերային հսկում և երդումային կամ ուխտադիր ծեսեր, որոնք միասին ստեղծել են համատեղ կրոնական փորձառության համակարգ:

Ժողովրդական պատկերացումներում Ս. Ստեփանոսը հաճախ դիտարկվում է որպես որոշակի գործառութներվ օժտված սուրբ՝ կապված բժշկման, ընտանեկան հովանավորչության, ճանապարհորդության ապահովության և արդարության վերահսկման գաղափարներին: Այս պատկերացումները, չնայած իրենց տեղային և ոչ կանոնական բնույթին, կարևոր դեր են խաղացել սրբի պաշտամունքի կենսունակության և սոցիալական ամրապնդման գործում: Դրանք վկայում են պաշտոնական եկեղեցական դավանաբանության և ժողովրդական կրոնական գիտակցության փոխազդեցության մասին:

Առանցքային է նաև սրբավայրերի սոցիալական գործառույթը. դրանք ծառայել են որպես համայնքային համախմբման, սոցիալական կապերի վերարտադրության և մշակութային հիշողության փոխանցման կենտրոններ: Ուխտագնացությունները հաճախ կրել են նաև տոնական և հանրային բնույթ՝ նպաստելով համայնքային ինքնության ամրապնդմանը և միջսերնդային ավանդույթների շարունակականությանը:

Ս. Ստեփանոս անվամբ սրբավայրերի, ուխտավայրերի և ժողովրդական ուխտագնացական պրակտիկաների համակարգը պետք է դիտարկել որպես հայկական կրոնամշակութային տարածության շարժունակ կառուցվածք, որտեղ համադրվում են եկեղեցական ինստիտուցիոնալ ավանդույթը և ժողովրդական կրոնական փորձառությունը՝ ձևավորելով սրբի պաշտամունքի բազմաշերտ և շարունակական մշակութային մոդել:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
Ս. ՍՏԵՓԱՆՈՍԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Ատենախոսության երրորդ գլխում քննվում են հայ մշակութային համակարգերում Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարի բազմաշերտ դրսևորումները հայ մշակութային համակարգերում՝ ընդգրկելով գրական, բանահյուսական, պատկերագրական և անվանաբանական հարթությունները: Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել, թե ինչպես է համաքրիստոնեական նախավկայական սրբի կերպարը վերաիմաստավորվել հայկական միջավայրում՝ ձեռք բերելով տեղական կրոնամշակութային առանձնահատկություններ և երկարատև մշակութային կենսունակություն:

Միջնադարյան հայ գրականության և բանահյուսության մեջ Ս. Ստեփանոս Նախավկան ներկայացվում է որպես քրիստոնեական նահատակության առաջնա-

յին նախատիպ, որի կերպարը ձևավորում է վկայաբանության և բարոյականության դավանաբանական կաղապարը: Նրա նահատակությունը մեկնաբանվում է որպես Քրիստոսի վկայության անմիջական շարունակություն՝ ընդգծելով հավատքի, սիրո և ներողամտության քրիստոնեական իդեալները: Հայ վարքագրական և մեկնողական գրականության մեջ նրա կերպարը հաճախ ներգրավվում է դիդակտիկ և խրատական նպատակներով՝ ծառայելով որպես հավատացյալի վարքագծի և եկեղեցական ինքնության ձևավորման օրինակ: Բանահյուսական ավանդույթում Ս. Ստեփանոսը ստանում է գործառութային-ժողովրդական մեկնաբանություն՝ կապված պաշտպանական, բուժիչ և միջնորդական պատկերացումների հետ, ինչը վկայում է պաշտոնական և ժողովրդական կրոնական գիտակցության փոխազդեցության մասին:

Ս. Ստեփանոս Նախավկայի պատկերագրությունը հայ և համաքրիստոնեական արվեստում ձևավորվել է նահատակաբանական իկոնոգրաֆիայի շրջանակում՝ պահպանելով կանոնական կառուցվածք և միաժամանակ արտահայտելով տեղական գեղարվեստական դպրոցների առանձնահատկությունները: Նրա պատկերները հիմնականում ներկայացնում են սարկավագական կերպար՝ ուրարով և նահատակության խորհրդանշական տարրերով՝ քարերով, որոնք ուղղակիորեն հղում են կատարում վկայաբանության մեջ նրա մահվան հանգամանքին: Հայ միջնադարյան մանրանկարչության և որմնանկարչության մեջ Ս. Ստեփանոսի պատկերները ներառվում են սրբերի շարքային կամ տոնական կոմպոզիցիաներում՝ ընդգծելով նրա դերը վաղ քրիստոնեական սրբերի համակարգում: Պատկերագրական վերլուծությունը ցույց է տալիս նրա կերպարի երկակի իմաստաբանական կառուցվածքը՝ որպես պատմական նահատակ և աստվածաբանական նախատիպ, ինչը նրան հաղորդում է նաև դիդակտիկ և խորհրդաբանական գործառույթ:

«Ստեփանոս» անունը հայկական անձնանուններում լայն տարածում է ստացել ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ դասի միջավայրերում՝ դառնալով քրիստոնեական ինքնության և սրբապաշտական պատկանելության նշանաբանական տարր: Ժողովրդական միջավայրում «Ստեփանոս» անունը պահպանել է նաև պաշտպանական և բարեբեր ընկալումներ՝ ամրապնդելով սրբի կերպարի ներգործությունը սոցիալ-մշակութային մակարդակում:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ս. Ստեփանոս Նախավկայի կերպարը հայկական մշակույթում ունի բազմաշերտ կառուցվածք, որտեղ համադրվում են գրական, բանահյուսական, պատկերագրական և անվանաբանական համակարգերը: Այս փոխկապակցված դաշտերը վկայում են սրբի կերպարի համընդհանուր քրիստոնեական հիմքի և դրա տեղական մշակութային վերամաստավորման միջև առկա շարունակական դինամիկայի մասին, ինչն ապահովել է նրա պաշտամունքի երկարաժամկետ կենսունակությունը հայկական միջավայրում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսությունում քննված խնդիրների վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

• Հետազոտությունը փաստում է, որ Ս. Ստեփանոսի պաշտամունքը, որն արմատավորվել է 4-րդ դարում Երուսաղեմում, քրիստոնեական վկայաբանության հիմնասյունն է: 415 թ. նրա մասունքների հայտնությունը վճռորոշ դեր խաղաց նրա պաշտամունքի համաշխարհային տարածման և կերպարի ապակենտրոնացման գործում: Ծիսակարգային կանոնակարգման գործընթացում Ս. Ստեփանոսի տոնը ստացել է առանցքային նշանակություն՝ խորհրդանշելով Եկեղեցու հիմքերի ամրապնդումն առաջին նահատակի զոհաբերությամբ, ինչն էլ նպաստել է սարկավագության ինստիտուտի սրբագործմանը:

• Հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցում Ս. Ստեփանոսի կերպարը ենթարկվել է յուրօրինակ կառուցվածքայնացման: Ի տարբերություն քրիստոնեական այլ ավանդույթների՝ հայկական միջավայրում սուրբը ձեռք է բերել սարկավագության դասի բացարձակ հովանավորի կարգավիճակ: Սա ամրագրվել է բացառիկ ծիսական իրավունքով. սարկավագական տոնին՝ դեկտեմբերի 25-ին կամ 26-ին Ս. Ստեփանոս Նախավկայի տոնի առիթով սարկավագներին վերապահված ուրար կրելու արտոնությունը, ինչպես նաև նրանց ձեռնադրումը:

• Հետազոտությունը ցույց է տալիս, որ հայ եկեղեցական մատենագրության մեջ (աստվածաշնչյան մեկնություններ, հայրաբանական երկեր, վարքագրություններ) Ս. Ստեփանոսի կերպարը ձևավորվել է որպես նահատակության և անձնուրաց ծառայության խորհրդանիշ: Նա ընկալվում է որպես առաջին սարկավագ և Քրիստոսի առաջին վկա (Նախավկա), որի կերպարում միահյուսվում են քարոզչական եռանդը, հավատի անսասանությունը և ներողամտությունը: Հայ եկեղեցական ավանդույթը նրան վերապահել է առանցքային դեր՝ կարծես թե դասելով Հովհաննես Մկրտչի հետ նույն հարթության վրա, ինչն արտացոլված է թե՛ ծիսական տեքստերում և թե՛ պատկերագրության համակարգում:

• Հայ եկեղեցական մտածողության մեջ Ս. Ստեփանոսի՝ որպես բարեխոսի և «երկնային դռներ բացողի» աստվածաբանական մեկնաբանությունները հիմք են հանդիսացել նրա ժողովրդական պաշտամունքի ձևավորման համար: Եկեղեցական տեքստերում շեշտադրվող նրա զորությունն ու հրաշագործ հատկությունները (բժշկություն, արդարադատություն) ժողովրդական միջավայրում վերափոխվում են գործառնական հավատալիքների, որտեղ սուրբը դիտարկվում է որպես առօրյա խնդիրների կարգավորող և հովանավոր:

• Հետազոտությունը բացահայտում է, որ ժողովրդական կրոնական ընկալումներում Ս. Ստեփանոսի կերպարը հարստացվել է տեղական ինքնատիպ դրսևորումներով, որոնք հաճախ դուրս են գալիս պաշտոնական դավանաբանության շրջանակներից: Այդ պատկերացումներում սուրբը վերաիմաստավորվել է որպես կենդանի ու գործուն պաշտամունքային սուբյեկտ, որն օժտված է անմիջական բարեխոսական՝ «մուրազ տվող», բժշկման և այլ զորություններով:

• Չնայած Հայ Եկեղեցու կանոնական տոնացույցով Ս. Ստեփանոսի հիշատակը նշվում է դեկտեմբերի 25-ին, ժողովրդական պաշտամունքային տոները ժամանակագրական առումով զգալիորեն տարբերվում են՝ հաճախ պայմանավորված լինելով տեղական սրբավայրերի վերաօծմամբ: Համանուն սրբավայրեր կատարվող ուխտագնացությունները սերտորեն շաղկապվել են հայոց ավանդական տոնացուցային համակարգին, մասնավորապես՝ Սուրբ Զատկին, Կանաչ և Կարմիր կիրակիներին, Համբարձմանն ու Վարդավառին: Սա վկայում է այն մասին, որ սրբի պաշտամունքը ժողովրդական միջավայրում վերաիմաստավորվել է, ինչը նպաստել է սրբավայրերի կենսունակությանը տարվա տարբեր ժամանակաշրջաններում:

• Չնայած Ս. Ստեփանոսը իր գործունեությամբ Հայաստանի և հայերի հետ ուղղակիորեն չի առնչվել, որպես աստվածաշնչյան սուրբ նրա պաշտամունքը Հայաստանում մեծապես կարևորվել է պաշտոնական եկեղեցու կողմից: Վերջինիս հովանավորությամբ իրականացված մասունքների ձեռքբերումն ու հանրայնացումը նպաստել են այն բանին, որ դրանց պահպանման վայրերը վերածվել են ժողովրդական ուխտավայրերի, որոնց շուրջ ձևավորվել են մեղքերի թողության, բարեկեցության, բժշկման համար կատարվող ծիսական արարողություններ:

• Ս. Ստեփանոսի պաշտամունքին առնչվող ուխտագնացությունները և զոհաբերության արարողությունները (օրինակ՝ լավաշով կամ արիշթայով մատաղը) ցույց են տալիս պաշտոնական և ժողովրդական կրոնական շերտերի սերտ փոխազդեցությունը: Երաշտի ժամանակ անձրևաբերության նպատակով սրբի «Աջի» հետ կատարվող ծիսակարգերը վկայում են այն մասին, թե ինչպես են եկեղեցական մասունքները ձեռք բերել տնտեսական և կենցաղային նշանակություն ունեցող գործառույթներ:

• Ս. Ստեփանոսի անունը կրող վանական համալիրների և մատուռների աշխարհագրական բաշխվածությունը (Մեծ Հայք, Կիլիկիա, Իրան) ապացուցում է նրա պաշտամունքի ազգային-մշակութային ամբողջականությունը: Այդ վանքերը (մասնավորապես՝ Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը) ծառայել են որպես հոգևոր-կրթական կենտրոններ, որտեղ սրբի կերպարն նպաստել է հայ քրիստոնյայի բարոյական և հայրենասիրական ինքնության ձևավորմանը:

• Գրավոր սկզբնաղբյուրների համադիր քննությունը վերհանել է Ս. Ստեփանոսի անվամբ ավելի քան 260 սրբավայր, որոնք պատմական տարբեր շրջաններում կարևոր դեր և նշանակություն են ունեցել եկեղեցական, մշակութային և համայնքային կյանքում:

• Ժամանակակից հայ կրոնական կյանքում Ս. Ստեփանոսի կերպարը շարունակում է վերաիմաստավորվել: Սրբի անունը կրող նորակառույց եկեղեցիները (ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս) և դրանց շուրջ ձևավորվող համայնքային կյանքը փաստում են պաշտամունքի կենսունակությունը: Արդի պրակտիկաներում սուրբը հանդես է գալիս որպես ազգային և հոգևոր ինքնության խորհրդանիշ: Մատենագրական, ազգագրական և արդի դաշտային տվյալների համադրումը փաստում է հայ կրոնական մշակույթի դինամիկ և անընդհատական բնույթը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՅՈԼՎԱԾ Է ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. *Л. Аветисян*. Святилище Св. Степанос Нахавка (Нахавик) в селе Мастара.- «Живая старина». 2017. № 3. стр. 27-29.

2. *Լ. Ավետիսյան,* Լմբատավանք (Լմպատի վանքի սբ. Ստեփանոս եկեղեցի).- Աստվածաբանության ֆակուլտետ, «Տարեգիրք», 2017, ԺԲ, էջ 217-224:

3. *Լ. Աւետիսեան,* Ստեփանոս Նախավկայի կերպարը հայ միջնադարեան գրականութեան և բանահիւսութեան մէջ.- «Հայկազեան հայագիտական հանդէս», հտ. 38, 2018, էջ 131-141:

4. *Լ. Ավետիսյան, Կ. Հովհաննիսյան,* Ս. Ստեփանոս Նախավկան XIII-XIX դդ. հայկական կերպարվեստում.- «Էջմիածին», 2022, Ե, էջ 86-101:

5. *Լ. Ավետիսյան*, Ս. Ստեփանոս Նախավկա անունը կրող սրբավայրերը Գեղարքունիքի մարզում.- «Էջմիածին», 2023, Թ, 136-143:

6. *Լ. Ավետիսյան*, Ս. Ստեփանոս Նախավկայի մասունքների պաշտամունքի ձեւաւորումը.- «Էջմիածին», 2025, ԺԱ, էջ 100-113:

7. *L. Avetisyan*, Pilgrimages to the Sanctuaries of St. Stephen Protomartyr: Dates and Functions. Scrinium: Journal of Patrology and Critical Hagiography, 2026, 22, pp. 1-19. (Scopus).

8. *Л. Аветисян*, Формирование и проявления культа реликвий в армянской среде (на примере почитания мощей Святого Стефана)// Концепт: философия, религия, культура. - 2026. - Т. 10, № 2, с. 61-76. (Scopus).

АВЕТИСЯН ЛИАНА ГАГИКОВНА

СВЯТОЙ СТЕФАН ПЕРВОМУЧЕНИК В АРМЯНСКИХ РЕЛИГИОЗНЫХ ТЕКСТАХ, НАРОДНЫХ ПРЕДСТАВЛЕНИЯХ И СОВРЕМЕННЫХ ПРАКТИКАХ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.04 «Этнография».
Защита состоится 4 августа 2026 г. в 12:00 ч., на заседании специализированного совета 007 по археологии и этнографии КВОН, действующего при Институте археологии и этнографии НАН РА
(адрес: 0025, г. Ереван, ул. Чаренца 15)

Резюме

Данная диссертация посвящена комплексному исследованию культа святого Стефана Первомученика - одной из наиболее значимых фигур как Вселенской Церкви, так и армянской религиозной и культурной традиции. Основной целью работы является выявление исторических, богословских и этнографических процессов, посредством которых общехристианский культ святого был локализован и инкультурирован, став неотъемлемой частью армянской идентичности. Исследование

состоит из трёх основных глав, логически последовательно раскрывающих становление образа святого от его возникновения до современных форм почитания.

В первой главе всесторонне рассматриваются исторические и богословские предпосылки формирования культа святого Стефана в духовном контексте раннехристианского Иерусалима. Святой Стефан представлен как абсолютный архетип и образец христианского мученичества. На основе прежде всего книги «Деяния святых апостолов» анализируется символическое значение его мученической смерти, ставшей основой формирования агиографических канонов последующих столетий. Особое внимание уделено чудесному обретению мощей святого в Кафар-Гамале в 415 году, которое рассматривается как переломный этап в развитии его культа. Обретение и последующее перенесение (*translatio*) мощей способствовали расширению «сакральной географии»: через распространение святынь благословение Иерусалима распространилось по всему христианскому миру, сформировав единую сеть паломнических центров и священных мест, одним из важнейших узлов которой стала Армения. В данной главе также исследуется литургическая регламентация празднования памяти святого в раннехристианских календарях и прослеживается постепенное развитие его почитания в святоотеческой литературе.

Во второй главе исследуются сложные процессы локализации и *армениза-ции* образа святого, в ходе которых официальная церковная традиция органично соединилась с живыми пластами народного христианства. На основе анализа средневековой армянской историографии и богатого эпиграфического материала обосновывается вывод об исключительном государственном и церковном значении культа святого Стефана в Армении. Данное явление непосредственно связано с историей христианизации Армении и преданием о перенесении мощей святого в Армению святым Григорием Просветителем, что обусловило, во-первых, непосредственное участие церковной иерархии в распространении культа святого и, во-вторых, устойчивую связь Армянской Апостольской Церкви с её изначальными иерусалимскими истоками. В подразделах главы впервые предпринята комплексная систематизация монастырей, церквей и часовен, посвящённых святому Стефану, охватывающая практически все провинции Исторической Армении. Особому анализу подвергаются такие крупные паломнические центры, как монастырь Святого Стефана в Джуге, Магардаванк и святилища Астапата, которые на протяжении столетий являлись важнейшими духовными и культурными центрами. Одним из существенных результатов исследования стало выявление функциональной типологии образа святого в народных представлениях. Показано, что в народном сознании канонический святой приобрёл функции чудотворного целителя, покровителя природных стихий и защитника от различных болезней, став непосредственным посредником в решении личных и общественных нужд.

Третья глава посвящена исследованию средневековой литературы, иконографии и ономастики. Анализ средневековых шараканов, тагов и гимнов жанра «гандз» позволяет проследить поэтизацию и символическую эволюцию образа святого как «отверзающего небесные врата» и «первого свидетеля» Христовой истины. Парал-

лельно исследуются иконографические каноны изображения святого в армянской книжной миниатюре, монументальной живописи и скульптуре. Особое внимание уделяется своеобразию армянской иконографической традиции, в которой диаконские облачения святого и сцены его побиения камнями получили ярко выраженное национальное художественное осмысление. Кроме того, рассматривается широкое распространение имени Степанос в армянской антропонимии как среди духовенства, так и среди мирян, что интерпретируется как прямое свидетельство жизнеспособности культа и его глубокой укоренённости в армянской идентичности.

В заключении на основе синтеза полученных результатов делается вывод о том, что святой Стефан Первомученик трансформировался в устойчивый культурный код армянской культуры. Его культ представляет собой органичное единство письменной традиции и живой религиозной практики, объединяющее историческую память, литургическую жизнь и коллективное сознание. Комплексный характер проведённого исследования позволяет не только по-новому оценить место и значение армянской агиографической культуры в контексте всемирного христианского наследия, но и документировать и проанализировать преемственность этнокультурного наследия в современном мире, где образ святого Стефана продолжает оставаться живым и значимым элементом армянской духовной жизни.

AVETISYAN LIANA GAGIK

SAINT STEPHEN THE PROTOMARTYR IN ARMENIAN RELIGIOUS TEXTS, POPULAR PERCEPTIONS AND CONTEMPORARY PRACTICES

Dissertation for the degree of PhD in History on the specialization “Ethnography” 07.00.04. The defense of the dissertation will be held on August 4, 2026, at 12:00 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of HESC by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA (address: 0025 Yerevan, 15 Charents st.)

Summary

This dissertation is dedicated to a multifaceted examination of the cult of Saint Stephen the Protomartyr, one of the most significant figures in both the Universal Church and the Armenian religious and cultural tradition. The primary objective of the work is to uncover the historical, theological and ethnographic processes through which this pan-Christian saint was localized and inculturated into an inseparable part of Armenian identity. The study is structured into three main chapters, logically guiding the reader from the origins of the saint’s persona to its contemporary manifestations.

The first chapter provides a comprehensive investigation of the historical and theological prerequisites for the formation of the cult of Saint Stephen within the spiritual context of early Christian Jerusalem. In this section, Saint Stephen is viewed as the absolute archetype and paradigm of Christian martyrdom. Based primarily on the "Acts

of the Apostles", the study analyzes the symbolic significance of the saint's martyrdom, which served as the foundation for the development of hagiographic canons in subsequent centuries. Particular attention is paid to the miraculous discovery of the saint's relics in Caphar-Gamala in AD 415. This historical episode is characterized as a turning point in the evolution of the cult, as the discovery and subsequent dissemination (translatio) of the relics contributed to the expansion of "sacred geography." Through these relics, the blessing of Jerusalem spread across the throughout Christian world, creating a unified network of pilgrimages and sacred sites, with Armenia becoming one of its most vital hubs. This chapter also examines the liturgical regulation of the feast in early church calendars, highlighting the gradual development of the saint's glorification in patristic literature.

The second chapter focuses on the complex processes of localization and *Armenianization* of the saint's image, harmonizing official ecclesiastical tradition with the vital layers of folk Christianity. Through the examination of medieval Armenian historiography and rich epigraphic material, it is argued that the cult of Saint Stephen held exceptional state and ecclesiastical significance in Armenia. This phenomenon is directly linked to the history of the Christianization of Armenia and the tradition concerning the translation of the saint's relics to Armenia by Saint Gregory the Illuminator. This tradition necessitated, firstly, the direct involvement of the ecclesiastical hierarchy in the dissemination of the saint's cult and, secondly, a sustained connection between the Armenian Church to its primordial Jerusalem roots. Within the subchapters, an comprehensive mapping of monasteries, churches, and chapels bearing the name of Saint Stephen was conducted, covering nearly all provinces of Historical Armenia. Renowned pilgrimage sites, such as St. Stephen of Julfa, Maghardavank, and the sanctuaries of Astapat, which served as major spiritual and cultural centers for centuries, are subjected to special scrutiny. One of the key achievements of this chapter is the identification of the functional typology of the saint in popular perceptions. It is demonstrated that in the folk consciousness, the canonical saint acquired the attributes of a miraculous healer, a patron of the elements of nature, and a protector against diseases, becoming an immediate mediator for personal and communal concerns.

The third chapter examines the spheres of medieval literature, iconography, and onomastics. The analysis of medieval hymns (*sharakan*), odes (*tagh*), and *gandz* hymns reveals the poeticized and symbolic evolution of the saint's image as the "opener of heavenly doors" and the "first witness." Parallel to this, the study investigates the iconographic canons of the saint's depiction in Armenian manuscript illumination, fresco painting, and sculpture. The unique characteristics of the Armenian iconographic school are highlighted, where the saint's diaconal vestments and the scenes of his stoning are presented with distinct national aesthetic emphases. Furthermore, this section emphasizes the prevalence of the name "Stepanos" in Armenian anthroponymy among both the clergy and the laity. This is viewed as direct evidence of the cult's vitality and its deep-rootedness within Armenian identity.

In conclusion, through a synthesis of the research results, the dissertation arrives at the conclusion that Saint Stephen the Protomartyr has been transformed into a stable cultural code within the Armenian cultural milieu. His cult represents a harmonious unity of written tradition and living faith, encompassing historical memory, liturgical practices, and the collective consciousness. Such a comprehensive examination allows not only for the re-evaluation of the place and role of Armenian hagiographic culture within the global Christian heritage. Also documents and analyzes the continuity of ethno-cultural heritage in the modern world, where the figure of Saint Stephen remains a living and influential element of Armenian spiritual life.